ԻՐԱՆ. ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սնակ Սարուխանյան

Իրանի միջուկային ծրագրի բազմաթիվ հետազոտությունների շրջանակներից դուրս է մնում Իրանի կառավարության և հասարակության վերաբերմունքը երկրի ազգային միջուկային ծրագրի զարգացման խնդրի նկատմամբ: Իրանի միջուկային ծրագրի ուսումնասիրությունները հիմնականում հանգում են այդ երկրի գիտական, արդյունաբերական և այլ օբյեկտների տեխնիկական բնութագրերի հետազոտմանը, մինչդեռ դրանք, անկասկած, չափազանց կարևոր լինելով հանդերձ, դեռևս որոշիչ չեն երկրի միջուկային ծրագրի ստեղծման գործում: Պակաս կարևոր չէ նաև խնդրի հումանիտար կողմը, որն առնչվում է միջուկային ծրագրին ժողովրդի և ղեկավարության վերաբերմունքի, միջուկային զենք ստեղծելու կամ չստեղծելու դրդապատճառների, ներքաղաքական գործընթացների դինամիկայի և այլ հարցերին: Ներկայացվող հոդվածը նվիրված է Իրանի միջուկային ծրագրի հենց այս սակավ հետազոտված գործոնների ուսումնասիրությանը: Հոդվածի վերջում առաջարկվում են Իրանի և նրա միջուկային ծրագրի շուրջ ստեղծված ճգնաժամի լուծման մի քանի սցենարներ: Այս սցենարների իրականացումից շատ բանով կախված է նաև Հարավային Կովկասի ռազմաքաղաքական կայունությունը:

Միջազգային քաղաքական հանրության շրջանում ամենասուր և ամենաթեժ քննարկվող թեմաներից մեկի՝ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ստեղծվել է ստվարաձավալ վերլուծական գրականություն: Միջուկային ռումբ ստեղծելու Իրանի հնարավորության մասին ավելի շատ է գրվում, քան Պակիստանի և Հնդկաստանի համանման ծրագրերի վերաբերյալ, որոնք ընդամենը 7 տարի առաջ մեկը մյուսի հետևից փորձարկեցին իրենց միջուկային զենքը՝ դրանով իսկ էլ ավելի խորացնելով միջուկային զենքի չտարածման միջազգային կարգի շուրջ տիրող սուր ճգնաժամը, ինչպես նաև հիմք դնելով Հարավային Ասիայի և Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական արմատական փոփոխություններին [1, p. 428]: Ակնհայտ է, որ Իրանի միջուկային ծրագրի հանդեպ խիստ հետաքրքրությունը քաղաքական հիմք ունի և հիմնականում բխում է իրանա-ամերիկյան հարաբերություններում ստեղծված լարվածությունից:

Իրանը «խնդրահարույց» երկիր է: Նախ՝ ժամանակակից աշխարհում Իրանն այդպիսին է Միացյալ Նահանգների համար, ինչն Իրանի միջուկային ծրագրով նախատեսվող հետազոտությունների զգալի մասի նկատմամբ

սուբյեկտիվ վերաբերմունքի պատճառ է հանդիսանում: Մինչդեռ այս ծրագիրն, իրոք, խնդրահարույց է (այս անգամ արդեն առանց չակերտների) Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրների, այդ թվում և Հայաստանի համար:

Հայաստանին և տարածաշրջանի մյուս երկրներին սպառնացող վտանգը միայն այն չէ, որ իրանյան հրթիռներն իրենց գործողության շառավղով հասանելի են այդ երկրներին (ի տարբերություն ԱՄՆ-ի, որի տարածքը դեռ երկար ժամանակ անհասանելի կմնա իրանյան հրթիռների համար). տարածաշրջանի երկրները օբյեկտիվ պատճառներով չեն կարող շահագրգռված լինել զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) տարածմամբ, հատկապես սահմանակից երկրներում, որոնցից է ԻԻՀ-ն:

«Պակիստանի միջուկային ռումբի հայր» դոկտոր Խանի «գործը», որը կազմակերպել էր միջուկային տեխնոլոգիաների արտահոսքը Իրան և Լիբիա և որն իր արարքը բացատրում էր «ոչ թե հարստանալու ցանկությամբ, այլ մյուս իսլամական երկրներին միջուկային տերություններ դարձնելու նկատառումներով», ցույց տվեց, թե որքան անարդյունավետ է միջուկային նոր տերություններում գործող ԶՈԶ չտարածումն ապահովող համակարգը, ինչն ուղղակիորեն հարվածում է տարածաշրջանի երկրների շահերին [2]: Իրանն իր բազմաթիվ ներքին և արտաքին քաղաքական խնդիրներով այս առումով բացառություն չէ:

Չնայած գոնե վերջին տասնամյակում ԻԻՀ-ում գոյություն ունեցող, այսպես կոչված, «բարեփոխիչների» և կոշտ գծի կողմնակիցների (*hardliners*) մրցակցությանը, Իրանը տարածաշրջանի այն բացառիկ երկրներից է, որի կառավարման կառուցվածքն ունի համեմատաբար համակարգված բնույթ: Իհարկե, Իրանը յուրահատուկ երկիր է՝ կապված պետական կարևորագույն որոշումների ձևավորման և ընդունման գործընթացին ներգրավված իր չափազանց մեծաթիվ կառույցների ու հաստատությունների առկայության հետ: Իրանի կառավարման համակարգն այնպիսին է, որ հոգևոր և աշխարհիկ ինստիտուտները միմյանց միջև կիսում են իշխանական որոշ լիազորություններ, ինչը քաղաքական գործընթացին մրցակցային բնույթ է հաղորդում [3, p. 39]: Այս հանգամանքը չնայած համեմատաբար «ցրում» է երկրի իշխանական ուղղահայացը, սակայն իր դրական կողմն ունի, այն է՝ ԻԻՀ-ում փաստորեն ստեղծվել է «արգելքների և հակակշիռների» հատուկ, իրանյան համակարգ, որն իրանական իսլամական հեղափոխության ինքնատիպ բնութագրական գիծն է:

Չնայած հատուկ իշխանական լիազորություններին, որոնցով օժտված են Իրանի հոգևոր գործիչներն ու կառույցները, ինչպիսին է, ասենք, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ), Իրանում ան-

հնար է ներքին և արտաքին քաղաքական որևէ կարևոր որոշում ընդունել առանց երկրի նախագահի, մեջլիսի (խորհրդարան), Դիտորդական խորհրդի, ԱԳՆ-ի, ընդունվող որոշումների նպատակահարմարությունները որոշող խորհրդի, Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի հետ այն երկարատև և մանրակրկիտ քննարկելու և համաձայնեցնելու:

Իրանում ոչ մի մարդ, ոչ մի խմբավորում չի կարող ինքնուրույն որոշում կայացնել քաղաքական և տնտեսական կարևոր հարցերի շուրջ: ԻԻՀ-ում համապետական, համազգային բնույթի կարևորագույն որոշումներն ընդունվում են բացառապես կոնսենսուսի միջոցով [4, p. 21-22]: Վերն ասվածը սակավ չափով վերաբերում է նաև Իրանի միջուկային ծրագրին, քանի որ այդ ոլորտը (հատկապես ռազմական բաղադրիչը) աշխարհի պետությունների մեծ մասում, այդ թվում և միջուկային տերություններում համեմատաբար փակ է հասարակական, ինչպես նաև քաղաքական բաց քննարկման համար: Բավական է հիշել Իսրայելը, որտեղ միջուկային զենքն ստեղծվեց առանց խորհրդարանի իմացության, իսկ այսօր ինչպես հասարակությունը, այնպես էլ քաղաքական վերնախավը չեն ողջունում երկրի միջուկային ծրագրի վերաբերյալ քննարկումները:

Մինչդեռ, ինչպես ամենուրեք, Իրանի պարագայում ևս առկա են որոշակի աղբյուրներ, ներառյալ երկրի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները, որոնք արտահայտում են ազգային միջուկային ծրագրի զարգացման վերաբերյալ Իրանի ղեկավարության վերաբերմունքը:

Քանի որ Իրանում ազգային միջուկային զենքի ստեղծման հարցում քաղաքական և հասարակական վերջնական որոշում կայացնելու համար կոնսենսուսը ցանկալի և նույնիսկ պարտադիր պայման է, անհրաժեշտ ենք համարում համառոտ, սակայն հնարավորինս համակողմանի լուսաբանել իրանական հասարակության և կառավարության տարբեր ճյուղերի կողմից ազգային միջուկային ծրագրի (խաղաղ և միջուկային) ընկալման խնդիրը: Հարկ է նաև նշել, որ ներքաղաքական գործընթացի դինամիկան (մրցակցությունը «բարեփոխիչների» և «պահպանողականների» միջև) նույնպես ազդում է երկրի կողմից միջուկային ծրագրի զարգացման խնդրի վրա[1] [5, p. 131]:

Մանրամասն կանգ չենք առնի Իրանի միջուկային ծրագրի զարգացման վրա, նշենք միայն, որ 1997թ. Իրանի իսլամական հեղափոխությունը հանգեցրեց միջուկային էներգետիկայի և միջուկային տեխնոլոգիաների զարգացման ծրագրերի ժամանակավոր կասեցմանը, քանի որ Իրանի հետհեղափոխական իշխանությունների պատկերացմամբ, դրանք ԻԻՀ-ի հա-

[1] Հարկ ենք համարում նշել, որ Իրանում ոչ հազվադեպ քննարկումներն այս կամ այն կարևոր հարցի շուրջ կազմակերպվում են արհեստականորեն և հետապնդում են իբր տարբեր տեսակետների գոյության տպավորություն ստեղծելու նպատակ, այն ժամանակ, երբ այդ հարցի վերաբերյալ կոնսենսուսն արդեն ձեռք է բերվել:

մար հրատապ չէին: Իրանցիները վերսկսեցին իրենց միջուկային ծրագրի զարգացման գործընթացը միայն 1980-ական թթ. կեսերին՝ իրանա-իրաքյան պատերազմի ամենաթեժ պահին, ինչն, իհարկե, անուղղակիորեն վկայում է նրանց միջուկային ծրագրի զարգացման նոր փուլի մասին, որն, անշուշտ, պետք է ունենար նաև ռազմական բաղադրատարրեր:

Պատերազմի ժամանակ Իրանը բախվեց Իրաքի բավական լավ կազմակերպված ռազմական ուժերի հետ, որը ԻԻՀ-ի դեմ նաև զանգվածային ոչնչացման, մասնավորապես՝ քիմիական զենք կիրառեց: ԶՈԶ-ը «փոխհատուցում» էր սովորական սպառազինությունների և մարդկային ուժի բնագավառում Իրաքի ունեցած թուլությունը: Ինչպես հայտնի է, ոչ մի պետություն, այդ թվում ԱՄՆ-ը, ինչպես նաև միջազգային հանրությունը Իրաքին չմեղադրեցին Իրանի դեմ ԶՈԶ կիրառման համար (ԶՈԶ-ը կիրառվեց նաև բնակավայրերին հարվածելու նպատակով): Այս հանգամանքը Իրանի ղեկավարությանն ստիպեց մտածել ԶՈԶ, այդ թվում և միջուկային զենք ունենալու անհրաժեշտության մասին:

«Մենք պետք է սպառազինվենք քիմիական, բակտերիոլոգիական և ռադիոլոգիական (իմա՝ *միջուկային* – Ս.Ս.) զենքերով՝ ինքնապաշտպանական և հակահարձակողական նպատակներով» [6, p. 234]: Այս խոսքերը պատկանում են Իրանի խորհրդարանի նախկին խոսնակ, երկրի նախկին նախագահ և ԻԻՀ ընդունվող որոշումների նպատակահարմարությունը սահմանող խորհրդի ղեկավար Ա.Ա Հաշեմի Ռաֆսանջանիին, որը դրանք հնչեցրել է 1988թ., իրանա-իրաքյան պատերազմի ավարտի տարում:

Նշենք, որ ԶՈԶ ստեղծումն ինքնապաշտպանական նկատառումներով բառացիորեն ընկալել չի կարելի, և Հաշեմի Ռաֆսանջանիի խոսքերը պետք է հասկանալ իբրև փորձ ձևակերպելու, այսպես կոչված, «զսպման արդյունավետ միջոց» ստեղծելու անհրաժեշտությունը, ինչն առկա է նաև Իսրայելի միջուկային դոկտրինում. միջուկային զենքի առկայությունն Իսրայելում վրդովեցրել և զայրացնում է նրա հարևաններին, այդ թվում և Իրանին: Նույնն է նաև Պակիստանի պարագան. այստեղ ևս «իսլամական ռումբը» պետք է միայն ու միայն զսպման դեր իրականացներ: Այսինքն՝ Իրանում ԶՈԶ առկայությունը, դրա, ինչպես նաև միջուկային զենքի կիրառման սպառնալիքը, Հաշեմի Ռաֆսանջանիի պատկերացմամբ, չպետք է թույլ տային ԻԻՀ թշնամիներին երկրի դեմ ռազմական գործողություններ կամ լայնածավալ պատերազմ սկսել: Տվյալ դեպքում հնարավոր ագրեսորի դեմ ԻԻՀ-ի կողմից միջուկային զենքի կիրառման սպառնալիքը նշանակում է, որ տեսականորեն այդ զենքը պետք է կատարեր ագրեսորի առաջխաղացումը կասեցնող հարձակողական սպառազինության դեր: Անշուշտ, դժվար է տարբերակել ներխուժումը կանխող հարձակումը և պաշտպանությունը:

Փաստորեն, Հաշեմի Ռաֆսանջանին իր ելույթում ուրվագծում էր ԻԻՀ-ում գոյություն չունեցող միջուկային զենքի այն գործառույթները, որոնցով այս զենքն օժտված է բազմաթիվ երկրների, այդ թվում ԱՄՆ և Ռուսաստանի (որոնք ընդունում են միջուկային զենքի կանխարգելիչ օգտագործման հնարավորությունը) ազգային անվտանգության ապահովման համակարգում:

Իհարկե, Հաշեմի Ռաֆսանջանիի խոսքերը հարկ է մեկնաբանել՝ հաշվի առնելով նաև նրա ելույթի ժամանակային համատեքստը, այն է՝ իրանա-իրաքյան պատերազմի ժամանակաշրջանը: Սակայն Հաշեմի Ռաֆսանջանիի հենց այս հայտարարությունը նշանավորեց Իրանի միջուկային ծրագրի վերածնունդը:

Սակայն Իրանում միջուկային թեմատիկայի ակտիվ քննարկումներն սկսվեցին ընդամենը 1990-ական թթ., երբ Չինաստանի և Ռուսաստանի հետ ձեռք բերվեցին համապատասխան համաձայնություններ Իրանում միջուկային էներգետիկայի և միջուկային տեխնոլոգիաների գիտահետազոտական բազայի զարգացման հարցի վերաբերյալ:

Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Ն.Խադիանը «Նիքսոնի կենտրոնի» համապատասխան նախագծի շրջանակներում հրատարակած հոդվածում Իրանի ներկայիս ղեկավարությանը, միջուկային ծրագրի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հիման վրա, բաժանում է մի քանի խմբի.

1. Իրանում միջուկային էներգետիկայի զարգացման հակառակորդներ.- Այս ոչ բազմանդամ խումբը հիմնականում բաղկացած է, այսպես կոչված, «բարեփոխիչների ճամբարի» որոշ ներկայացուցիչներից, որոնց թվում է նաև Իրանի մեջլիսի փոխխոսնակ Բ.Նաբավին: Նրանք հավաստիացնում են, որ Իրանի միջուկային էներգետիկայի ոլորտում կատարվող ներդրումները երբեք չեն փոխհատուցվի: Տրամաբանական է, որ այս տեսակետը պաշտպանում են նաև Իրանի նավթարդյունահանման նախարարության որոշ պաշտոնյաներ:
2. Իրանում միջուկային զենքի զարգացման կողմնակիցներ. - Ամենամեծաթիվ խումբն է, որն անհրաժեշտ է համարում միջուկային ծրագրի զարգացումը՝ նավթից երկրի կախվածության նվազման և տնտեսության բարձրտեխնոլոգիական ոլորտի զարգացման նպատակով: Այս խմբի ներկայացուցիչները կողմնակից են, որպեսզի Իրանը հետևի միջուկային զենքի չտարածման պայմանագրին: Այս խմբի կողմնակիցների մոտեցումն արտահայտված է երկրի տարածքում միջուկային էներգետիկայի զարգացման հարցերի վերաբերյալ Իրանի պաշտոնական դիրքորոշման մեջ:
3. ԻԻՀ միջուկային ծրագրի ռազմական բաղադրիչի զարգացման կողմնակիցները կոչ են անում ստեղծել գիտատեխնիկական և արդյունա-

բերական հնարավորություններ, որպեսզի հնարավոր ռազմական սպառնալիքի դեպքում Իրանն անհապաղ կարողանա միջուկային զենք ստեղծել:

4. Միջուկային զենքի չտարածման պայմանագրից Իրանի դուրս գալու և անհապաղ միջուկային զենք ստեղծելու կողմնակիցները ԶՈԶ ստեղծման մեջ են տեսնում Իրանի գոյատևման և բարգավաճման հնարավորությունը [7, p. 51-64]:

Չնայած երկրորդ խումբը մեծամասնություն է կազմում, այնուամենայնիվ, հետազոտողներին հետաքրքրում է այն հարցը, թե ով է ավելի ազդեցիկ և ով է որոշում երկրի միջուկային քաղաքականությունը:

Հարցն արդարացի է, մանավանդ, երբ հաշվի է առնվում Իրանում իշխանության տարբեր կենտրոնների առկայությունը:

Առաջին խումբն Իրանում գրեթե ոչ մի ազդեցություն չունի, բացի այդ, բարեփոխիչների մեծ մասը չի պաշտպանում ազգային միջուկային ծրագիրը կասեցնելու նրանց կոչերը: Նույնը մասամբ վերաբերում է նաև վերջին խմբին, քանի որ Միջուկային զենքի չտարածման պայմանագրից (ՄԶՉՊ) դուրս գալն Իրանի համար կարող է ցավալի հետևանքներ ունենալ, ինչը մասամբ կարտահայտվի միջազգային առևտրատնտեսական պատժամիջոցներով և երկրի ներկայիս գործընկերների՝ Ռուսաստանի, Չինաստանի, Ճապոնիայի և ԵՄ-ի հետ հարաբերությունների վատթարացմամբ:

Սակայն, Ն.Խադիանի կարծիքով, Իսրայելի կամ ԱՄՆ-ի կողմից ԻԻՀ միջուկային օբյեկտներին հարվածելու դեպքում զգալիորեն կավելանա այն մարդկանց թիվը, ովքեր կոչ են անում դուրս գալ ՄԶՉՊ-ից և ստեղծել միջուկային ռումբ [7, p. 51-67]:

Հարկ է նշել, որ Իրանում միջուկային էներգետիկայի զարգացման և միջուկային զենք ունենալու կողմնակիցներն իրենց ելույթներում բարձրացնում են տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական իրավիճակի համատեքստում Իրանի անվտանգության ապահովմանն առնչվող հարցեր:

Միջուկային զենք ստեղծելու շուրջ քննարկումներն Իրանում հատկապես աշխուժացան Հնդկաստանում և Պակիստանում 1998թ. գարնանը միջուկային ռումբի փորձարկումներից հետո: Փաստորեն ավելացավ Իրանի՝ միջուկային զենք ունեցող տարածաշրջանային հարևանների թիվը: Իրանի ղեկավարությունն այս փորձարկումները դիտարկում է հենց Իրանի անվտանգության վրա ունենալիք ազդեցության համատեքստում [8, p.41]:

Միջուկային զենք ստեղծելու հակառակորդները բերում են իրենց դիրքորոշումն արդարացնող հետևյալ փաստարկները.

- ***Քաղաքական փաստարկ***. տարածաշրջանում ուժերի ստեղծված հավասարակշռության պայմաններում և Իրանի միջուկային ծրագրի զարգացման նկատմամբ միջազգային հանրության ակնդետ ուշադրության հետ կապված՝ ԻԻՀ միջուկային զենք ստեղծելու փորձը կբարդացնի երկրի դրությունը, ինչպես նաև կարող է հրահրել Իրանի թշնամիներին ռազմական գործողություններ սկսել նրա դեմ:
- ***Տնտեսական փաստարկ***. միջուկային զենք ստեղծելու ԻԻՀ ձգտումը պետք է ամրապնդվի երկրի համապատասխան ենթակառույցում խոշոր ներդրումներ կատարելով, ինչպես նաև անհրաժեշտ է վճարել արտասահմանյան գործընկերներին բարձրտեխնոլոգիական ոլորտներում մատուցած ծառայությունների համար: Մյուս կողմից՝ մի շարք զարգացող երկրների փորձը, ինչպիսին է, օրինակ, ԿԺԴՀ-ն, որտեղ, ի վնաս երկրի տնտեսության զարգացման, մեծ գումարներ տրամադրվեցին միջուկային զենքի ստեղծմանը, միանգամայն հստակ կերպով ցույց տվեց, թե ինչ աղետալի հետևանքներ կարող է ունենալ նման քաղաքականությունը: Փորձագետների գնահատմամբ, յուրաքանչյուր զարգացող երկրի համար միջուկային ռումբ ստեղծելու ծրագրի իրականացումը կարող է արգելակել տնտեսության զարգացումը 10-15 տարով [9, c. 56]:
- ***Տեխնոլոգիական փաստարկ***. Իրանը տեխնոլոգիական առումով պարզապես ի վիճակի չէ միջուկային զենք ստեղծել, ինչը պայմանավորված է երկրում գիտատեխնիկական անհրաժեշտ հիմքի բացակայությամբ: Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը նպաստող ոչ մի ներդրում չի կարող հանգեցնել երկրում անհրաժեշտ տեխնիկական հիմքի ստեղծմանը, որը թույլ կտար միջուկային զենք ստեղծել: Սակայն, եթե նույնիսկ այդ զենքը ստեղծվի էլ, ապա միջուկային պատերազմ սկսվելու դեպքում Իրանն ավելի շատ կհայտնվի տուժողի դերում, քան նրա հնարավոր հակառակորդ Իսրայելը, որն ունի շատ հզոր և ժամանակակից միջուկային զինանոց [8, p. 41-46]:

Իրանում միջուկային զենքի ստեղծման հակառակորդներից է նաև ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ք.Խարազին: Վերջինս, մեկնաբանելով Իրանում միջուկային զենքի ստեղծման նպատակահարմարության հարցը, հայտարարել է, թե Ամերիկայի ռազմական հզորության համատեքստում միջուկային զենքն Իրանի համար նույնիսկ կանխարգելող դեր չի կարող խաղալ, և դրա ստեղծումը «ոչ միայն չի կարող լուծել Իրանի խնդիրները, այլև կնպաստի դրանց թվի ավելացմանը» [8, p. 43]:

Խարազիի հայտարարության մեջ արտահայտված են ԻԻՀ-ում միջու-

կային զենքի ստեղծման հակառակորդների դիրքորոշումները, որոնք ունեն իրենց քաղաքական և տեխնոլոգիական փաստարկները:

Հարցին այլ կերպ է մոտենում Իրանի հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ղեկավար Ի.Սաֆավին, որն Արևմուտքում համարվում է ԻԻՀ-ում միջուկային զենքի ստեղծման մոլի կողմնակիցներից մեկը: Բերենք մի հատված ԻՀՊԿ սպայական խորհրդի առջև նրա ունեցած և բավական աղմուկ հանած ելույթից. «Արդյոք մենք կարո՞ղ ենք դիմակայել ամերիկյան սպառնալիքին և բռնապետական վերաբերմունքին լիցքաթափման քաղաքականության *(detente)* միջոցով: Կարո՞ղ ենք մենք Ամերիկայից եկող սպառնալիքները կասեցնել քաղաքակիրթ երկխոսությամբ[1]: Կարո՞ղ ենք մենք պաշտպանել իսլամական հանրապետությունը՝ ստորագրելով քիմիական և միջուկային զենքի չտարածման պայմանագիրը» [10]: Սաֆավին չի պատասխանում իր իսկ բարձրացրած հարցերին, սակայն դրանց ձևակերպումն այնպիսին է, որ բացասական պատասխանն ակնկալվում է ինքնին:

Նշենք, որ Սաֆավիի ելույթը, թվագրված 1998թ. ապրիլի 27-ին, ամենայն հավանականությամբ, կապված էր Հնդկաստանում և Պակիստանում նախաձեռնվող միջուկային փորձարկումների հետ: Դրանք խորհել էին տալիս տալիս անմիջական հարևանների հետ զինված հակամարտության դեպքում իրանական զինված ուժերի անկարողության մասին: Եթե նախկինում Իրանը ռազմական առումով զիջում էր միջուկային Իսրայելին և ՆԱՏՕ անդամ Թուրքիային, ապա Հնդկաստանի և Պակիստանի կողմից միջուկային զենքի փորձարկումներից հետո Իրանն արդեն ընկնում էր այնպիսի երկրների շրջապատման մեջ, որոնք գերազանցում էին նրան ոչ միայն սովորական սպառազինությունների հարցում, այլև արդեն ՋՈՋ ունեին:

Սաֆավիի բարձրացրած հարցերին բացասաբար պատասխանող մարդկանց թիվն զգալիորեն ավելացավ Իրաքի դեմ ԱՄՆ սկսած պատերազմից հետո: Այն ցույց տվեց, որ միջազգային իրավունքն ու միջազգային կազմակերպություններն ի վիճակի չեն զսպել ԱՄՆ-ին, որի կողմից ներխուժման սպառնալիքի բոլոր հիմքերն Իրանն ունի: Դա կարող է սկսվել ԱՄՆ-ին ոչ հարմար վարչակարգերի նկատմամբ հակահաբեկչական գործողություններով: Այսօր, փաստորեն, ԱՄՆ զինված ուժերի խոշոր միավորումներ են տեղակայված Իրանի երկու հարևան պետություններում՝ Աֆղանստանում և Իրաքում (որոշ վերապահությամբ կարելի է ասել, թե դրանք վերահսկում են այս երկրները): Սակայն խնդիրը ոչ թե այն է, որ այդ ուժերը գտնվում են այնտեղ, այլ թե ինչպես են դրանք այդ երկրներում հայտնվել [11, p. 99]:

[1] Ակնարկում է նախագահ, բարեփոխիչ Մ.Խաթամիի առաջադրած տեսությունը, որն Իրանում շատերը գործնական տեսակետից չկայացած են համարում:

Վերլուծելով իրաքյան պատերազմի ազդեցությունը միջուկային զենքի չտարածման գործում՝ Վ.Ի.Սաժինը գալիս է այն եզրակացության, որ «այսպես կոչված «շեմային երկրները», այսինքն՝ այն երկրները, որոնք գտնվում են ատոմային ռումբի ստեղծման ճանապարհին, առավել հաճախ են գալիս այն եզրահանգման, որ իրենց կօգնի միայն միջուկային զսպման դոկտրինը» [12, p. 149]:

ԱՄՆ-ը Իրաք ներխուժումն արդարացրեց նրանով, որ այդ երկիրը քիմիական զենք է արտադրում: Իրանը համոզվեց, որ քիմիական զենքի առկայությունն Իրաքում և այն կիրառելու սպառնալիքները չխանգարեցին ԱՄՆ-ին ներխուժել Իրաք [13, p. 23]: Ավելի ուշ ամերիկացիները խոստովանեցին, որ Իրաքում քիմիական զենք չկար: Իրանցիները կրկին պետք է համապատասխան եզրակացություններ կատարեին, որովհետև Իրաքում ԶՈԶ արտադրելու և ունենալու մեղադրանքները ԱՄՆ-ի համար ընդամենը այդ երկրի դեմ ռազմական գործողություններ սկսելու առիթ էին: Բնականաբար, երկու հարց է առաջանում.

- Արդյոք ԱՄՆ-ը Իրաքի դեմ պատերազմ կսկսե՞ր, եթե Ս.Հուսեյնի վարչակարգը քիմիական կամ միջուկային զենք ունենար:
- Իրանի դեմ ԱՄՆ ծավալած տեղեկատվական քարոզարշավը շատ բանով հիշեցնում է Իրաքի դեմ կազմակերպվածը: Դա կարող է հուշել Իրանում միջուկային զենքի արտադրման անվան տակ ԻԻՀ՝ ԱՄՆ-ին «խորթ» վարչակարգը տապալելու ԱՄՆ մտադրության մասին: Ուրեմն, ավելի ճիշտ չէ՞ր լինի իսկապես միջուկային զենք ստեղծել, որը կարող էր ԱՄՆ հարձակումից երկիրը պաշտպանելու երաշխիք հանդիսանալ:

Իրանի ստրատեգներն այս հարցերն անպայման պետք է բարձրացնեին:

Նույնիսկ ամերիկյան առաջատար փորձագետներն են նշում, որ «Թեհրանը փորձում է միջուկային զենք ձեռք բերել ամենից առաջ նրա համար, որ կանխի ԱՄՆ հարձակումը» [14, c. 132]: Այս կարծիքին է, մասնավորապես, 1995-1996թթ. և 1999-2001թթ. ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի Պարսից ծոցի գործերի վարչության նախկին ղեկավար Կ.Պոլակը:

Ամերիկյան ներկայիս վարչակազմի արտաքին քաղաքական ռազմավարությունը ցույց է տալիս, որ Իրանի դեմ ձեռնարկված գործողություններն, ամենայն հավանականությամբ, հետագայում միակը չեն մնա իրենց տեսակի մեջ: Ամեն ինչ վկայում է այն մասին, որ այս պատերազմն ապագայում նմանատիպ գործողությունների նախադեպն է: Համենայնդեպս, նման հետևության կարելի է հանգել ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների (այդ թվում և նախագահի) ելույթներից, ինչպես նաև ամերիկյան վարչակազմի ներկայիս ռազմավարությունից): ԱՄՆ հանրապետական վարչակազմի արտաքին քա-

ղաքական ծրագրերի զգալի մասն իրականացվեց դեռևս 1990-ական թթ.՝ «Նոր ամերիկյան հարյուրամյակ» նախագծի շրջանակներում, որն ստեղծվել է ներկայիս վարչակազմի այնպիսի ակնառու գործիչների ակտիվ մասնակցությամբ, ինչպիսիք են Դ.Ռամսֆելդը, Դ.Չեյնին և Փ.Վուլֆովիցը: Իրատեսական չի թվում ակնկալել, թե արտաքին քաղաքականության մեջ ուժային մեթոդների նկատմամբ հակվածությունը կթուլանա չորս տարի անց նոր դեմոկրատ նախագահի հնարավոր ընտրության դեպքում: Համենայնդեպս, Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ը շարունակում է վարել կոշտ, բռնության կիրառմանը միտված արտաքին քաղաքականություն: Մեր կարծիքով, գոյություն ունեն երեք հիմնական պատճառներ.

1. Մերձավոր Արևելքում Ամերիկայի ռազմավարությունը ձևավորվում է Իսրայելի շահերի պարտադիր հաշվառմամբ: Եվ եթե նախկինում դա ավելի շատ բնորոշ էր ԱՄՆ-ում հրեական կազմակերպությունների հետ ավանդաբար սերտ հարաբերություններ ունեցող ժողովրդավարական կուսակցությանը, ապա այսօր դա հատուկ է նաև հանրապետականներին, որոնց նկատմամբ վերջին ժամանակներս առավել չափով կողմնորոշվում է ԱՄՆ հրեական ազդեցիկ համայնքը [15, c. 108]:
2. Ա.Ա.Կոկոշինը նշում է, որ «Նոր ամերիկյան հարյուրամյակ» նախագծում կենտրոնական տեղ է զբաղեցնում Չինաստանի երկրորդ գերտերություն դառնալու խնդիրը և այն, թե ինչ միջոցներով է Միացյալ Նահանգները խոչընդոտելու դրան» [15, c. 109]: Մերձավոր Արևելքը նման «խոչընդոտի» օպտիմալ գործիք է հանդիսանում: Դեռ 1990-ական թթ. ակնհայտ էր Մերձավոր Արևելքի «հնազանդեցնող» դերը Չինաստանի համար: Չինաստանի նավթի պահանջարկի մոտ 40%-ն այսօր ապահովվում է Մերձավոր Արևելքից (առաջին հերթին Իրանից, Օմանից և Եմենից) այն ներմուծելով: ՉԺՀ արագ զարգացող տնտեսությունն էներգակիրների մեծ պակաս ունի: Վերջինս 2003թ. ռեկորդային քանակությամբ հում նավթ է ներմուծել՝ ավելի բան 91 մլն տ, ինչը 31%-ով գերազանցում է 2002թ. ցուցանիշը: «*International Energy Outlook*»-ի տվյալներով Մերձավոր Արևելքի նավթի նկատմամբ Չինաստանի պահանջարկը 2020թ. կարող է հասնել մինչև 91%-ի [16], ինչը նշանակում է, որ Չինաստանի գրեթե ամբողջ տնտեսությունը կախված է մերձավորարևելյան էներգակիրներից, հետևաբար նաև էներգակիրները վերահսկող տերությունից կամ տերություններից: Չինաստանն, իհարկե, ջանում է դիվերսիֆիկացնել ածխաջրածնի մատակարարման աղբյուրները, առաջին հերթին՝ ղազախստանյան և ռուսաստանյան աղբյուրների հաշվին: Սակայն դժվար թե Չինաստանին հաջողվի հասնել լիակատար անկախության մերձավորարևելյան նավթից: Վերն ասվածից էլ-

նելով՝ առաջիկայում ԱՄՆ-ը բոլոր հնարավոր միջոցներով ամրապնդելու է իր ներկայությունը Մերձավոր Արևելքում՝ շարունակելով իր քաղաքական գիծն առաջ տանելու տեսակետից անհարմար երկրների, այդ թվում և Իրանի «հնազանդեցման» գործելաոճը:

3. Եվ, վերջապես, սեփական էներգետիկ անվտանգության ապահովման անհրաժեշտությունը ԱՄՆ-ին մղում է «ակտիվ մասնակցություն» ունենալ մերձավորարևելյան գործերին[1]:

Չի կարելի ենթադրել, թե Իրանի ղեկավարությունը չի գիտակցում, որ երկրին մարտահրավեր է նետված, որին Իսլամական հանրապետությունը պետք է պատասխան տա: Իսլամական հեղափոխության հիմնադիր, Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլա Խոմենեին ԻԻՀ այն ժամանակվա նախագահ Ալի Խամենեիին և ԻՀՊԿ բարձրաստիճան սպաներին 1987թ. գրած իր նամակներում նշում էր նույնիսկ մզկիթների ոչնչացման հնարավորության մասին, եթե այդ կպահանջեն երկրի ազգային շահերը [17, p. 136]: Հենց ազգային շահերի պաշտպանության խնդիրը և ազգային անվտանգության ապահովումն են Իրանի ղեկավարության համար շարժառիթ ծառայում երկրի գոյատևման ռազմավարության գործընթացում միջուկային զենքի տեղը որոշելու հարցում: Այս շարժառիթը գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ կպահպանվի մերձավորարևելյան տարածաշրջանում վերջին 1,5 տասնամյակի ընթացքում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունը:

Այլ հարց է, թե ազդեցիկ կլինի, արդյոք, Իրանի վրա ճնշումը ԵՄ-ի, Ռուսաստանի կամ, ասենք, ԱՄՆ-ի կողմից: Սակայն այդ ճնշումն Իրանում միջուկային ռումբի ստեղծման շարժառիթը չի վերացնի, հատկապես, եթե այն ընտրովի բնույթ ունի: Բուշ-կրտսերի վարչակազմի արմատական տրամադրություններ ունեցող անդամների (Ռոբերտ Զոզեֆ՝ Ազգային անվտանգության խորհրդի ավագ աշխատակից, ԶՈԶ տարածման դեմ պայքարի գծով պատասխանատու, Դուգլաս Ֆեյթ՝ պաշտպանության փոխնախարար, Զոն Բոլտոն՝ Փաուելի աշխատակազմի պետքարտուղարի տեղակալ) կարծիքով, խնդիրը ոչ թե ինքը՝ միջուկային զենքն է, այլ այն «վատ տղաները», որոնց ձեռքին է այն [18, c. 66-67]: Հենց այս նկատառումներով էլ ոչ մի ճնշում չի գործադրվում Իսրայելի, որը, հնարավոր է, ունի մի քանի հարյուր միջուկային մարտագլխիկ, և Պակիստանի վրա: Ինչպես արդարացիորեն նշում է Իսրայելի և Մերձավոր Արևելքի հետազոտման ինստիտու-

[1] 1990-ական թթ. Կասպիցի՝ «երկրորդ Պարսից ծոցի» նավթի պաշարների շուրջ ստեղծված էյֆորիայի փոխարեն այսօր ամերիկյան ստրատեգները, քաղաքական գործիչներն ու նավթարդյունաբերողները ավելի իրատեսական մոտեցում ունեն Կասպիցին և ԱՄՆ էներգետիկ անվտանգության ապահովման գործում նրա ապագա դերին: Մերձավորարևելյան նավթը դեռ երկար ժամանակ գլխավոր դեր կկատարի համաշխարհային տնտեսական հավասարակշռության պահպանման հարցում:

տի տնօրեն Ե.Վ.Սատանովսկին, «Իսլամական ռումբը վերածվել է իր տեսակի մեջ «սուրբ Գրաալի», որն ինքնակամ տեղաշարժվում է Մերձավոր Արևելքով՝ Վաշինգտոնի շահերի վեկտորին համապատասխան հետագծով՝ Սիրիա, Իրան... Ընդ որում, Ամերիկայի կողմից համարյա թե ամենափոքր ուշադրությունն է դարձվում միակ իսլամական պետությանը՝ Պակիստանին, որը ոչ միայն միջուկային զենք ունի, այլև կարող է հայտնվել մահմեդական ծայրահեղականների ձեռքում [19, c. 89]: ԱՄՆ այսպիսի քաղաքականությունը ներկայում գործող միջուկային զենքի չտարածման ռեժիմն այնքան էլ արդյունավետ չի դարձնում:

ԱՄՆ ռազմական ներխուժումը Իրաք համընկավ Իրան-ԱԷՄԳ (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն) հարաբերությունների որոշակի լարվածության հետ, ինչն էլ ավելի խորացրեց Իրանում ազգային միջուկային ծրագրի զարգացման շուրջ ընթացող քննարկումների գաղտնիությունը: Սակայն կարելի է ասել, որ իրաքյան գործողություններից հետո ԻԻՀ-ում միջուկային զենքի ստեղծման հնարավորության նկատմամբ իրանցիների վերաբերմունքն ավելի բարյացակամ է դարձել:

Իրանցի գիտնական Ա.Թարզին, որն աշխատում է ԱՄՆ-ում, կարծում է, որ Իրանն այսօր բավականաչափ պատճառներ ունի միջուկային զենք ստեղծելու համար [12, c. 150]: Նման կարծիք է արտահայտել նաև Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Ա.Աստարխանին «Միջուկային տեխնոլոգիաներ և կայուն զարգացում» կոնֆերանսում (որը 2005թ. մարտի 5-6-ին կազմակերպել էին Իրանում ընդունվող որոշումների նպատակահարմարությունը որոշող կենտրոնը և ԱԳՆ-ն) ունեցած ելույթում: Աստարխանին կոչ էր անում Իրանին դուրս գալ ՄԶՉՊ-ից, քանի որ այդ պայմանագիրը զրկում է Իրանին պաշտպանվելու իրավունքից, իսկ ինքը ոչ մեկին չի պաշտպանում:

Վերոնշյալ կոնֆերանսի առնչությամբ հետաքրքիր է նշել նաև մի հարց, որը բարձրացվեց Ա.Ա.Հաշեմի Ռաֆսանջանիի կողմից: Դիմելով կոնֆերանսի մասնակիցներին՝ Հաշեմի Ռաֆսանջանին հայտարարեց, թե Արևմուտքը ուշադրություն չի դարձնում այն բանին, որ Իսրայելը միջուկային զենք ունի: Իսրայելն ինքը, ինչպես ընդունված է կարծել, կանգնել է անվտանգությանն սպառնացող վտանգի առջև, ուստի և, արևմտյան քաղաքագետների կարծիքով, Իսրայելին անհրաժեշտ է ունենալ միջուկային զենք: Այնուհետև Հաշեմի Ռաֆսանջանին տալիս է հռետորական հարց. «Իսկ ի՞նչ անեն մյուս երկրները, որոնք նույնպես անվտանգության սպառնալիքներ ունեն»: Շատերին ակնհայտ դարձավ, որ Հաշեմի Ռաֆսանջանին ակնարկում է Իրանում միջուկային զենքի ստեղծման անհրաժեշտության մասին: Իրանում այս հարցի շուրջ առաջացած ներքին կոնսենսուսի պայմաններում ԻԻՀ-ում միջուկային զենքի ստեղծման միակ խոչընդոտ է հանդիսա-

նում անհրաժեշտ նյութատեխնիկական և արդյունաբերական բազայի բացակայությունը, ինչպես նաև միջազգային հանրության և միջազգային կազմակերպությունների, առաջին հերթին՝ ԱԷՄԳ ճնշումը:

Այսուհանդերձ, հոդվածն ամբողջական չէր լինի, եթե մենք, նկարագրելով միջուկային զենքի ստեղծման հարցի նկատմամբ Իրանի ղեկավարության հիմնավորված մոտեցումը, չփորձեինք տալ մեկ այլ հարցի պատասխանը, որն արդեն ուղղակիորեն առնչվում է Հայաստանի և տարածաշրջանի մյուս երկրների շահերին. ***ինչպե՞ս կանխել միջուկային զենքի ստեղծումը ԻԻՀ-ում:***

Ավելի ճիշտ կլիներ հարցնել. ինչպե՞ս վերացնել միջուկային զենքի ստեղծման շարժառիթը: Ինչպես հայտնի է, Իրանի միջուկային ծրագրի ակունքների մոտ կանգնած է ԱՄՆ-ը, որը շահական Իրանին օգնում էր նրա խաղաղ միջուկային ծրագրի զարգացման գործում: Մեր խորին համոզմամբ, ժամանակակից Իրանի ռազմական միջուկային ծրագրի հիմքում նույնպես ընկած է ամերիկյան գործոնը, բայց արդեն անուղղակիորեն, մասամբ՝ ԱՄՆ քաղաքականությունը հետհեղափոխական Իրանի նկատմամբ, որի վերջին դրսևորումներից է Իրանին «չարիքի համաշխարհային առանցքի» մեջ ներգրավելը: «Կլինի՞, թե՞ ոչ Իրանում միջուկային ռումբ» հարցի լուծումը հիմնականում պետք է փնտրել հենց իրանա-ամերիկյան հարաբերությունների հարթությունում:

Հնարավոր է միջուկային զենք ունենալու Իրանի ցանկությունը վերանա, եթե Մերձավոր Արևելքում և Հարավային Ասիայում ստեղծվի միջուկային զենքից զերծ գոտի, որի համար կպահանջվի վերացնել Իսրայելի, Հնդկաստանի և Պակիստանի միջուկային պոտենցիալը: Սակայն եթե սա հնարավոր էլ է, ապա միայն արաբա-իսրայելական և հնդկա-պակիստանյան հարաբերությունների կարգավորումից հետո, ինչն առաջիկայում քիչ հավանական է թվում:

Վերոնշյալը նկատի ունենալով՝ մեր կարծիքով, այսօր «իրանական հարցի» լուծման մի քանի սցենարներ կան, որոնք են.

Սցենար 1

Ամենաարդյունավետ տարբերակը Մերձավոր Արևելքում տարածաշրջանային անվտանգության արդյունավետ համակարգի ստեղծումն է՝ դրանում տարածաշրջանի բոլոր պետությունների, ԱՄՆ, Ռուսաստանի ու Եվրամիության պարտադիր մասնակցությամբ: Լավ կլինի, որ այս ամենն ուղեկցվի իրանա-ամերիկյան միջպետական հարաբերությունների անգամ աննշան, դեկլարատիվ բարելավմամբ, որի արդյունք կարող են հանդիսանալ ԱՄՆ-ի կողմից Իրանին ձևականորեն տրվող անվտանգության երաշ-

խիքները: Այս պարագայում կվերանա ԻԻՀ կողմից միջուկային զենքի ստեղծման օբյեկտիվ պատճառների մեծ մասը: Այս սցենարը փոքր-ինչ ուտոպիական է, քանի որ դրա իրականացումը պահանջում է տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրության սկզբունքային փոփոխություն, ինչը տվյալ պահին անհնար է թվում:

Սցենար 2

ԱՄՆ-ի և ԻԻՀ-ի միջև երկխոսության չկայացման պարագայում հարցի լավագույն լուծման տարբերակ կարող է համարվել Իրանի վրա միջազգային ճնշման շարունակումը՝ նրանից պահանջելով դադարեցնել միջուկային ոլորտում ռազմական նպատակներով իրականացվող հետազոտությունները: Այս սցենարը հնարավոր է ԱՄՆ մասնակցությամբ կամ առանց նրա, ենթադրվում է՝ ԵՄ-Ռուսաստան ձևաչափում: Արդյունքում՝ Իրանը կհրաժարվի ռազմական միջուկային ծրագրից (որի առկայությունն, ի դեպ, նա չի էլ ընդունում), կկասեցնի աշխատանքները մի քանի բարձրտեխնոլոգիական ոլորտներում, սակայն միջուկային զենքի ստեղծման դրդապատճառները, իրանա-ամերիկյան հարաբերությունների չկարգավորման համատեքստում, չեն վերանա, և երկիրն իրեն հարմար ժամանակ կրկին կվերադառնա միջուկային զենքի ստեղծման դադարեցված աշխատանքներին:

Սցենար 3

Եվ, վերջապես, մնում է հարցի ռազմական լուծման սցենարը, ենթադրվում է՝ ԱՄՆ-ի և/կամ Իսրայելի կողմից Իրանի միջուկային ենթակառուցվածքի օբյեկտներին հարվածելու միջոցով, կամ էլ, ինչպես Իրաքում, ցամաքային լայնածավալ գործողություն սկսելով: Միջուկային օբյեկտներին «թիրախային» հարվածներ հասցնելու տարբերակը հնարավոր, սակայն քիչ արդյունավետ է: Ավելին, այն կհանգեցնի տարածաշրջանի իրավիճակի էլ ավելի բարդացմանը՝ Իրանի կողմից Իսրայելին և/կամ տարածաշրջանում (Իրաքում) գտնվող ամերիկյան ուժերին պատասխան հարված հասցնելով, «Հզբոլահի» նման կազմակերպությունների (որոնք սերտ կապ ունեն Իրանի հետ) ակտիվացմանը:

Ինչպես ենթադրվում է, միջուկային զործունեության դադարեցման հարցում Իրանի զիջումները միակողմանի չեն լինի: Հնարավոր է՝ ԵՄ-ը և նույնիսկ ԱՄՆ-ը կաջակցեն Իրանին ինտեգրվել միջազգային տնտեսությունում (անդամակցությունը ԱՀԿ-ին և այլն), ինչը դրական հետևանքներ կունենա Իրանի տարածաշրջանային հարևանների, այդ թվում և Հայաստանի համար:

Պակաս հավանական է ցամաքային գործողությունների սկսման տար-

բերակը, չնայած, հաշվի առնելով ԱՄՆ ներկայիս վարչակազմի՝ երբեմն չարդարացվող բարձր ռիսկի հակվածությունը, այն լիովին բացառելը ճիշտ չէ: Այս սցենարի իրականացումը կլուծի մի խնդիր, բայց կառաջացնի մի քանի նորերը, որոնց արդյունքը կհանդիսանա ապակայունացումը, այսպես կոչված, Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում: Հարկ է առանձնապես նշել, որ այս սցենարի իրականացումը Հայաստանի և տարածաշրջանի մյուս երկրների համար բացասական հետևանքներ կունենա: Պատերազմի դեպքում հայ-իրանական սահմանը, որը Հայաստանի համար թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական նշանակություն ունի, կմատնվի անգործության: Ավելին, Իրանում հնարավոր ներքաղաքական և էթնիկական գործընթացների համատեքստում, այդ սահմանը կարող է վերածվել Հայաստանի ազգային անվտանգությանն սպառնացող իրական աղբյուրի: Պատերազմն Իրանում, հնարավոր է, նույնպես կարող է դառնալ Լեռնային Ղարաբաղի կարգավորման շուրջ անցանկալի գործընթացների կատալիզատոր:

Երեք սցենարներում էլ կարևորագույն տեղ է գրավում ԱՄՆ-ը, որից էլ մեծ չափով կախված է Իրանի միջուկային ծրագրի և միջուկային զենքի չտարածման գործող համակարգի ապագան: Իրանը Միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամ երկիր է, և նրա կողմից միջուկային զենքի ստեղծումը մեծ հարված կհասցնի ՄԶՉՊ-ին՝ ցույց տալով ԱԷՄԳ տեսչությունների անզորությունը և բացասաբար անդրադառնալով այդ կազմակերպության հետագա գործունեության վրա: Հարկ է նշել նաև, որ Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումը երկրի տարածաշրջանային շատ հարևանների կհանգեցնի այն մտքին, որ իրենց ևս անհրաժեշտ է ունենալ միջուկային ռումբ [20, p. 169]: Առաջին հերթին դա վերաբերում է Թուրքիային և Սաուդյան Արաբիային: Մինչդեռ Մերձավոր Արևելքով մեկ միջուկային զենքի տարածումը մեծ վտանգ է պարունակում Հայաստանի և Հարավային Կովկասի համար:

«Իրանի հարցը» մեկ անգամ ևս ապացուցում է ԱՄՆ, ԵՄ և Ռուսաստանի՝ տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների նկատմամբ համատեղ մոտեցումների մշակման անհրաժեշտությունը, ինչպես նաև ցույց է տալիս Իրանի նկատմամբ ամերիկյան «մտրակ առանց բլիթի» քաղաքականության անհեռանկարայնությունը [21, c. 171]: Լուծումը հնարավոր է, բայց այն համատեղ ջանքեր է պահանջում:

Մարտ, 2005թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Vaezi M., Saghafi-Ameri N.,* Tactical Nuclear Weapons Regional Perception in the Middle East, South Asia, North East Asia // The Iranian Journal of International Affairs. IPIS. Fall 2000, Vol. XII, №3.
2. Известия, 2 февраля, 2004.
3. The Future Security Environment in the Middle East. Conflict, Stability, and Political Change. / Ed. by Bensahel N., Byman D. RAND Corporation, Santa Monica, CA. 2004.
4. *B.Daniel, Sh.Chubin, A.Ehteshmi, J.Greene,* Iran's Security Policy in the Post-Revolutionary Era. National Defense Research Institute, RAND.
5. *Eisenstadt M.,* Living with a nuclear Iran? // Survival, vol. 41, #3, Autumn 1999.
6. *Cordesman A.,* Iran's Military Forces in Transition: Conventional Threats and Weapons of Mass Destruction. Westport, CT: Praeger. 1999.
7. Iran's Bomb. American and Iranian Perspectives. Ed. By G.Kemp. NC, Washington, March 2004.
8. Iran's Nuclear Options: Issues and Analyzes, ed. by Kemp G. NC, Washington. January 2001.
9. *Балуджи Г.А.,* О ядерном выборе Ирана. Ядерный контроль, №4 (70), том 9, 2003.
10. Jame'eh, April 27, 1998.
11. *Tarzi A.,* The Role of WMD in Iranian Security Calculations: Dangers to Europe. Middle East Review of International Relations, Vol.8, #3, September 2004.
12. *Сажин В.И.*, 2004. Война против Ирака и проблема нераспространения ядерного оружия. Армия, ВТС, ОМП на Ближнем Востоке. – ИИИБВ, М., 2004.
13. *Takeyh R.,* Iran's Nuclear Calculations. // World Policy Journal , Volume 20, #2, Summer 2003.
14. *Поллак К.,* Как сделать Персидский залив безопасным? // Россия в глобальной политике, том 1, №4, октябрь-декабрь, 2003.
15. *Кокошин А.А.,* Ядерные конфликты в XXI веке - ИПМБ РАН, ЦПНБР МГУ, М., 2003.
16. International Energy Outlook 1998.
17. *Eisenstadt M.,* Living with a Nuclear Iran? // Survival, vol. 41, №3, 1999.
18. *Перкович Дж.*, Ядерная революция Буша. 2000.// Россия в глобальной политике, том 1, №2.
19. *Сатановский Е.В.,* Мир после иракской войны. // Ядерный контроль, №3 (69), том 9, с.89, 2003.
20. *Perkovich G., Mathews J., Cirincione J.. Gottemoeller R., Wolfsthal J.,* Universal Compliance. A Strategy for Nuclear Security. CEIP, Washington, DC. March 2005.
21. Иранский тест для великих держав.// Россия в глобальной политике, том 2, №1, 2004.

ИРАН: ОТНОШЕНИЕ К ЯДЕРНОЙ ПРОГРАММЕ

Севак Саруханян

Резюме

Иранская ядерная программа на сегодняшний день является одной из важнейших и обсуждаемых тем международного значения. Однако эта проблема имеет особое значение и во внутрииранском контексте, так как она долгие годы обсуждалась также представителями общественной и политической элиты ИРИ. Думается, что анализ именно внутренних подходов позволяет определить ядерные претензии Ирана и их характер.

В статье анализируется процесс и характер внутрииранских дискуссий по ядерной программе. Особое внимание уделяется тем заявлениям и лицам, которые призывают к созданию ядерного оружия. В результате анализа выяснилось, что большинство сторонников создания иранского ядерного оружия увязывают его необходимость с угрозами, существующими в сфере обеспечения безопасности ИРИ. Знаменательно, что для иранцев доводы о необходимости создания ядерного оружия стали убедительнее после того, как США напали на Ирак без санкции СБ ООН.

В заключительной части статьи предлагаются три сценария возможного развития событий вокруг ядерной программы Ирана. В результате их обсуждения выясняется, что Армения и другие страны региона должны быть заинтересованы в исключительно мирном урегулировании проблемы.